

11.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ
------------	---

**ՆԿԱՏԱՌՈՒՄՆԵՐ ԶԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ
ՄԱՆԴԱՏԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Յ. Յ. ԶԱԿՈՐՅԱՆ
*ՀՀ Սփյուռքի նախարար,
 ԳԴՀ խորհրդի նախագահ,
 իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր*

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակը պայմանավորված է օրենսդիր իշխանության մարմնի անդամին վերապահված մանդատի բնույթով:

Տարբեր պետություններում սահմանադրական իրավունքի տեսության մեջ, օրենսդրությամբ և իրավակիրառ պրակտիկայում տարբերվում են պատգամավորի հրամայական (իմպերատիվ) ու ազատ մանդատները:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 66-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով¹: Պատգամավորի սահմանադրաիրավական լիազորությունները վերլուծելիս՝ պետք է ճշտել այն հարցը, թե արդյոք պառլամենտի անդամի մանդատը հրամայական է, թե՞ ազատ, նա ունի՞ հնարավորություն՝ գործելու իր համոզմունքներին համապատասխան, պատասխանատվություն կրելու իր ընտրողների առջև, թե՞ ոչ: Մինչ 1995 թվականը Հայաստանի Հանրապետությունում օրենսդիր մարմնի անդամի մանդատը հրամայական էր: Հրամայական մանդատը ընտրողների կողմից պատգամավորին տրված լիազորություններն են՝ այն պայմանով, որ նա պարտավոր է կատարելու իր ընտրողների պատգամները և իր գործողությունների համար պատասխանատվություն կրելու նրանց առջև: Եթե պատգամավորը չի իրագործում իր խոստումները կամ պառլամենտում աշխատում է ոչ բավարար արդյունավետությամբ, ապա ընտրողներն իրավունք ունեն նրան հետ կանչելու և այդպիսով

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն (փոփոխություններով), Երևան, 2005, էջ 32:

ենթարկելու նեգատիվ սահմանադրական պատասխանատվության²: Ուստի, հրամայական մանդատի դեպքում պատգամավորն ազատ չէ իր դիրքորոշումն արտահայտելիս՝ պառլամենտում հարցերը լուծելիս, նա պետք է ծառայի ոչ թե ողջ ժողովրդին, այլ իր ընտրողներին: Իսկ ազատ մանդատը, ընդհակառակը, ենթադրում է, որ պատգամավորը չպետք է կաշկանդված լինի իր ընտրողների պատվիրաններով, այլ պառլամենտում պետք է գործի՝ ելնելով իր համոզմունքներից՝ հանուն ողջ ժողովրդի: Ազատ մանդատը հաշվի է առնում ժողովրդի ընդհանուր և տեղական շահերը չհամընկնելու հնարավորությունը ու ելնում է ընդհանուր շահերին նախապատվությունը տալու անհրաժեշտությունից: Ազատ մանդատի դեպքում չի գործում պատգամավորի հետկանչի ինստիտուտը: Պատգամավորն իր գործունեության համար պատասխանատվություն է կրում ոչ թե անմիջական ընտրողների, այլ ողջ ժողովրդի առջև: Ազատ մանդատն իր տարբեր դրսևորումներով գործում է շատ պետություններում: Իսկ հրամայական մանդատն առավել բնորոշ է բռնատիրական, ավտորիտար պետություններին, որոնց անհրաժեշտ են «ժողովրդի ղեկավարման» արտաքին միջոցներ, թեև այդպիսի պետություններում հետկանչի իրավունքը գործնականում չի կիրառվում:

Իրավական, ժողովրդավարական պետությունը ելնում է այն կանխադրույթից, որ ընտրողների պատգամները և ընտրողի առջև պատգամավորի ուղղակի հաշվետու լինելն իմաստ ու գործնական կիրառություն ունեն նախ տեղական ինքնակառավարման մակարդակում, իսկ պետական մակարդակում պառլամենտները լուծում են առավել բարդ, համապետական նշանակություն ունեցող հարցեր՝ ի շահ ողջ ժողովրդի ու պետության, ուստի պատգամավորներն ունեն ավելի լայն լիազորություններ և պետք է հանդես գան որպես ժողովրդի և ոչ թե միայն իրենց ընտրողների ներկայացուցիչներ:

1936 և 1977 թվականներին ընդունված ԽՍՀՄ սահմանադրություններում ամրագրվեց հրամայական մանդատի պահանջը, որը նախատեսում էր նաև պատգամավորի հետկանչ՝ օրենքով սահմանված կարգով³: Այդ նորմերը տեղ էին գտել նաև Հայաստանի երկրորդ Հանրապետության օրենսդրության մեջ և գործեցին մինչև 1995 թվականը: Հայաստանի երրորդ Հանրապետության Սահմանադրության համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում գործում է ոչ թե հրամայական, այլ ազատ մանդատի սկզբունքը, ըստ որի՝ պատգամավորը կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով: Պատգամավորի համոզմունքները ձևավորվում են նրա ընդհանուր աշխարհայացքի, գիտելիքների, իրավական համակարգի իմացության, կենսափորձի, արժեքային կողմնորոշումների հիման վրա: Պառլամենտի անդամն ունի սկզբունքներ, բարոյական չափանիշներ, արժեքնորմատիվային համակարգ, որոնց համապատասխան իրականացումն է իր գործունեությունը՝ չունենալով ընտրողների կողմից հետ կանչվելու մտահոգություն և ձգտելով պառլամենտարիզմի ձևավորմանն ու զարգացմանը⁴:

² Այս մասին մանրամասն տե՛ս **Հակոբյան Ռ. Խ.** Սահմանադրական պատասխանատվության հիմնախնդիրները, Երևան: Իրավունք, 2008, 516 էջ:

³ Տե՛ս Конституция (Основной Закон) СССР, М.: Политиздат, 1977.

⁴ Տե՛ս **Հակոբյան Յ. Յ.** Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան: Տիգրան Մեծ, 2007, 708 էջ:

Ուսումնասիրելով եվրոպական երկրների փորձը և պառլամենտարիզմի զարգացման պատմությունը՝ հանգում ենք այն եզրակացության, որ գործում է այն կանխադրույթը, ըստ որի՝ ընտրված պատգամավորը ցանկացած դեպքում ճիշտ է ներկայացանում իր ընտրողների, պետության շահերը, և որևէ մեկին իրավունք վերապահված չէ հակադրվել նրան կամ խոչընդոտել նրա գործունեությանը: Պառլամենտարիզմի զարգացմանը զուգընթաց շատ երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Իտալիա) աստիճանաբար հրաժարվեցին հրամայական մանդատից և իրենց սահմանադրություններում ամրագրեցին ազատ մանդատի ինստիտուտը, քանի որ պատգամավորական ազատ մանդատն ավելի առաջադիմական է, քան հրամայական մանդատը: Եթե անձն իսկապես ժողովրդի ընտրյալն է, նրա ներկայացուցիչը և պատրաստ է պատգամավորական գործունեություն իրականացնելու, ապա նա պետք է գործի ազատորեն՝ իր խղճի և համոզմունքների համաձայն: Նա չպետք է կաշկանդված լինի ընտրողների հրահանգներով, պահանջներով և չի կարող հետ կանչվել մինչև իր լիազորությունների ավարտը⁵:

Հայաստանի Հանրապետությունում Ազգային ժողովի պատգամավորի հետկանչի հարցն այժմ առավել, քան երբևէ խնդրահարույց է, քանի որ Ազգային ժողովի 131 պատգամավորից 90-ն ընտրվել են համամասնական ընտրակարգով, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում քվեները տրվել են ոչ թե կոնկրետ անձին, այլ կուսակցության կամ դաշինքի ներկայացրած ցուցակին: Հետևաբար, անհնար է պատկերացնել ընտրողի կողմից ցուցակում ընդգրկված որևէ անդամի հետկանչի կառուցակարգ: Իհարկե, այստեղ կարելի է քննարկել այն դեպքը, երբ կուսակցության, խմբակցության անդամն իր գործունեությամբ արատավորում է պատգամավորի հեղինակությունը, ստվերում կուսակցության կամ խմբակցության գործունեությունը, վարկաբեկում վերջինիս նպատակները: Օրինակ, կարելի է սահմանել նորմ, ըստ որի՝ կուսակցության կենտրոնական մարմինն անհրաժեշտ հիմքերի առկայության դեպքում վաղաժամկետ կարող է դադարեցնել պատգամավորի լիազորությունները: Մյուս կողմից էլ՝ նման դրույթի առկայությունը կկաշկանդի խմբակցության անդամ պատգամավորին և կստեղծվի հնարավորություն՝ վերջինիս սկզբունքային կամ կուսակցության ընդհանուր հարցադրումներին վերաբերող յուրաքանչյուր քննադատություն կամ առաջարկություն դիտել որպես հակադրություն կուսակցությանը և դեռևս չկայունացած քաղաքական համակարգի պայմաններում չի բացառվում, որ կուսակցության ղեկավարներն առիթն օգտագործեն նման պատգամավորից «ազատվելու» համար: Ակնհայտ է, որ ժողովրդի կամքը պետք է առաջնային լինի կուսակցության կամքից: Թեև գտնում ենք, որ ուժեղ և կայացած կուսակցությունների առկայության դեպքում խմբակցությունից հեռացված կամ դուրս եկած պատգամավորը պետք է վայր դնի մանդատը: Ինչպես վերը նշեցինք, ժողովրդավարական երկրներում գործում է ազատ մանդատի ինստիտուտը: Սակայն ազատ մանդատի դեպքում ևս պատգամավորը հաշվի է նստում իր կուսակցական խմբակցության որոշման, իր ընտրատարածքի ընտրողների հետ: Իրավաբանորեն, սակայն, պատգամավորի քվեարկելու իրավունքը՝ այս

⁵ Տե՛ս **Հակոբյան Ռ. Ռ.** Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի գործունեության մի քանի հիմնախնդիրների շուրջ, Երևան, 2005, 120 էջ:

կամ այն հարցի կապակցությամբ, ոչնչով սահմանափակված չէ: Գիտակցելով, որ իր նախընտրական խոստումները երբեմն հանրահաճո բնույթ էին կրում և ոչ միշտ են համընկնում համապետական շահերին՝ պատգամավորը կարող է հրաժարվել այդ խոստումներից:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրությունը շրջանցում է պատգամավորի մանդատի բնույթի մասին հարցը, իսկ օրենսդրությունն այն լուծում է ոչ լիարժեք ձևով⁶: Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ հրամայական մանդատը չի գործում, քանի որ նախատեսված չէ պատգամավորի հետկանչի իրավունքը: Սակայն ազատ մանդատն ունի որոշ ավանդական գծեր. օրինակ՝ պատգամավորի պարտականությունը՝ տեղեկացնելու ընտրողներին իր գործունեության մասին, ապահովելու նրանց իրավունքների իրականացումը, ղեկավարվելու նախընտրական ծրագրով: Բայց նշված պարտականությունների չկատարման համար սանկցիաների բացակայությունն ընդհանուր առմամբ թույլ է տալիս պատգամավորին՝ զործել ազատորեն, իր համոզմունքներին համաձայն: Գործնականում նման կարգավիճակ ունեն մաս Դաշնության Խորհրդի անդամները: Թեև նրանք հանդիսանում են Ռուսաստանի Դաշնության սուբյեկտների պետական իշխանության մարմինների ներկայացուցիչներ, սակայն նախատեսված չէ վերջիններիս պարտականությունը՝ այդ մարմինների կազմում կատարելու իրենց ընտրած քաղաքացիների պատվիրանները:

ՀՀ Սահմանադրության 66-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորն իր պատգամավորական լիազորությունների ժամկետում և դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, այդ թվում՝ Ազգային ժողովում հայտնած կարծիքի համար, եթե այն զրպարտություն կամ վիրավորանք չի պարունակում:

Այսինքն՝ ՀՀ Սահմանադրությունը և Ազգային ժողովի կանոնակարգը (9-րդ հոդված) երաշխավորում են Ազգային ժողովի պատգամավորին, որ նա ոչ միայն իր պատգամավորական լիազորությունների իրականացման ընթացքում, այլև դրանից հետո չի կարող հետապնդվել և պատասխանատվության ենթարկվել պատգամավորի՝ իր կարգավիճակից բխող գործողությունների, մասնավորապես՝

- օրենսդրական նախաձեռնությամբ հանդես գալու,
- օրինագծերի վերաբերյալ կողմ կամ դեմ արտահայտվելու,
- քննարկվող ցանկացած հարցի վերաբերյալ կարծիք հայտնելու,
- առաջարկություններ անելու,
- քվեարկելու համար:

Սակայն Սահմանադրությունը նախատեսում է վերապահում. պատգամավորի կարծիքը չպետք է վիրավորանք կամ զրպարտություն պարունակի, քանի որ զրպարտությունն ու վիրավորանքը պատժելի արարքներ են, և պատգամավորը պետք է ձեռնպահ մնա նման գործողություններից:

Պատմական փորձի և նոր իրողությունների հաշվառմամբ էր, որ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորին վերապահվեց ազատ

⁶ St'u Конституция Российской Федерации, М., 1993.

մանդատ՝ միաժամանակ, Սահմանադրության 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերում ամրագրելով՝

«Պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել, կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության:

Պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին: Այս դեպքում անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

Այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի սահմանադրաիրավական կարգավիճակի կարևոր տարրը նրա անձեռնմխելիության իրավունքն է, ինչն արտահայտվում է հետևյալում.

- պատգամավորին չի կարելի որպես մեղադրյալ ներգրավել,
- օրենսդիր մարմնի անդամին չի կարելի կալանավորել կամ նրա նկատմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու հարց հարուցել՝ առանց Ազգային ժողովի համաձայնության,
- պատգամավորին չի կարելի ձերբակալել առանց Ազգային ժողովի համաձայնության, բացառությամբ այն դեպքերի, երբ ձերբակալությունն իրագործվում է հանցագործության կատարման պահին:

Ձերբակալումը դատավարական հարկադրանքի միջոց է, որն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելն է, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար⁷:

Եթե պատգամավորը հանցագործության կատարման վայրում ձերբակալվել է, ապա այդ մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը: Պատգամավորին կալանավորելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համար համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին, և այդ հարցը քննարկվում է Ազգային ժողովի նիստում: Չի բացառվում, որ պատգամավորը, որի մասին ներկայացվում է միջնորդություն, անհարգելի բացակայի Ազգային ժողովի նիստից: Այս դեպքում հարցը քննարկվում է առանց նրա ներկայության: Պատգամավորին ձերբակալելու, դատական կարգով վարչական կամ քրեական պատասխանատվության ենթարկելու համաձայնություն տալու հարցը լուծվում է գաղտնի քվեարկությամբ, նիստին ներկա պատգամավորների ձայների մեծամասնությամբ, ընդ որում՝ քվեարկությանը անպայման պետք է մասնակցի Ազգային ժողովի պատգամավորների կեսից ավելին:

Օրենսդիր մարմնի անդամի անձեռնմխելիության իրավունքը կարող է գործել լիազորությունների ողջ ժամանակահատվածում (Գերմանիա, Իսպանիա, Իտալիա) կամ նստաշրջանների ընթացքում (Ճապոնիա) և նստաշրջան մեկնելու ճա-

⁷ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 21.09.98 / 22 (55):

նապարհին ու հետ դառնալիս (ԱՄՆ): Այն կարող է տարածվել իրավակարգի խախտման ոչ բոլոր դեպքերի վրա (օրինակ, ԱՄՆ-ում անձեռնմխելիության իրավունքը (կամ՝ ինունիտետը) չի տարածվում ծանր հանցագործությունների, հասարակական կարգի խախտումների վրա): Ընդ որում՝ պատգամավորի աշխատավայրը, բնակարանը, անձնական իրերը, ճամպուկը խուզարկել չի թույլատրվում, այսինքն՝ անձեռնմխելիությունը տարածվում է նաև պատգամավորին պատկանող գույքի վրա: Ֆրանսիայի Սահմանադրության մեջ 1995 թվականին կատարված փոփոխության համաձայն՝ անձեռնմխելիության իրավունքը գործում է միայն նստաշրջանների ընթացքում և չի տարածվում քրեորեն պատժելի արարքների վրա:

Ընդհանուր առմամբ, ժողովրդավարական երկրներում նկատվում է պատգամավորական անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման միտում: Պատգամավորի անձեռնմխելիության ինստիտուտի կապակցությամբ կան տարբեր մեկնաբանություններ: Մենք գտնում ենք, որ պատգամավորական մանդատը չպետք է ծառայի անօրինականություններ թույլ տալու, հանցագործություն կատարելու և անձեռնմխելիության իրավունքով պաշտպանվելու համար:

Պատգամավորն իր պատշաճ վարքագծով ու պատասխանատվության բարձր զգացումով պետք է օրինակ ծառայի այլոց համար և առավել լուրջ ու հետևողականորեն կատարի իր պարտականությունները: Այս առումով կարելի է անձեռնմխելիության իրավունքը սահմանափակել: Գտնում ենք, որ այս իրավունքը պետք է կիրառվի միայն այն դեպքերում, երբ պատգամավորին հանիրավի հետապնդում կամ փորձում են պատասխանատվության ենթարկել իր կարգավիճակից բխող գործողությունների կամ պառլամենտում ունեցած ելույթի համար: Նման իրավիճակում պատգամավորի համար պետք է կիրառել պաշտպանության բոլոր կառուցակարգերը: Իսկ եթե պատգամավորը զանցանք կամ հանցագործություն է կատարել, ապա նա պետք է պատասխան տա օրենքին համապատասխան, օրենքով սահմանված կարգով՝ առանց Ազգային ժողովում գլխավոր դատախազի միջնորդությունը քննարկելու:

Այսպիսով, ՀՀ Ազգային ժողովի անդամը պատգամավորական գործունեություն իրականացնելիս ազատ է և՛ Ազգային ժողովում, և՛ դրանից դուրս, քանի որ սահմանադրորեն նա ունի ոչ հրամայական՝ ազատ մանդատ, և նրան չեն կարող հետապնդել, պատասխանատվության ենթարկել իր պատգամավորական գործունեությունն իրականացնելիս և դրանից հետո:

Պատգամավորը՝ որպես ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչ, պետք է դավանի արժեքային բարձր համակարգի, ունենա անհրաժեշտ հմտություններ, լինի անկողմնակալ, հանդուրժող, պատրաստ երկխոսության, դրսևորի հարգալից վերաբերմունք դիմացինի նկատմամբ, իր էությամբ լինի ժողովրդավար, կարողանա համադրել առաջավորը, համամարդկային և Ազգային արժեքները, լինի մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանության ջատագովը, նպաստի պառլամենտական ժողովրդավարության զարգացմանը, Ազգային ժողովի արդյունավետ գործունեությանը, նրա հեղինակության բարձրացմանը և ժողովրդի մոտ վստահության ամրապնդմանը:

О МАНДАТЕ ДЕПУТАТА НАЦИОНАЛЬНОГО СОБРАНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИИ

Г. Г. Акопян

В статье рассматривается мандат депутата Национального Собрания Республики Армения, обсуждаются вопросы изменения мандата и конституционного статуса члена законодательного органа в связи с конституционными преобразованиями в Республике Армения, а также выявляются отличия между императивным и свободным мандатами.

ABOUT THE DEPUTY'S MANDATE NATIONAL ASSEMBLY RA

Н. Н. Hakobyan

This article is devoted to the National Assembly deputy's mandate of the Republic of Armenia. The paper touches upon issues on legislative body member's mandate and changes of his/her constitutional status connected with constitutional reforms in the Republic of Armenia. It also discovers the peculiarities of imperative and free mandates.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ՏԵՍԱԿ

Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ

*Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
Իրավաբանական գիտությունների դոկտոր*

Հայաստանի Սահմանադրության առաջին հոդվածում Հայաստանի Հանրապետությունը հռչակվում է որպես ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն: Իսկ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության կայացման ու զարգացման գործընթացում խիստ կարևորվում է սոցիալական պատասխանատվության ինստիտուտը: Սոցիալական պատասխանատվությունը հասարակության ու պետության գոյության և կենսագործունեության օբյեկտիվ անհրաժեշտությամբ պայմանավորված իրողություն է, որն ապահովում է անձանց կողմից հասարակական համակեցության կանոնների, բարոյական արժեքային կողմնորոշումների ու սկզբունքների, իրավական նորմերի պահանջների կատարումը և դրանով իսկ համադրում անհատական, խմբային, հանրային և պետական շահերը: Սոցիալական պատասխանատվության հիմնական ձևերն են՝ բարոյական, քաղաքական, իրավաբանական պատասխանատվությունը, որոնք հասարակական հարաբերությունների սոցիալա-